Կանանց կրթության նոր ձևերից մեկը պետք է համարել տարրական առևտրական դպրոցը, որ բացվել է Կիևի քաղաքում: Այդ դպրոցը բուրլովին նոր տիպ է իր տեսակի մէջ: Առ այժմ բացված է միայն պատրաստական դասարանը, որ պարունակում է իր մէջ 39 աշակերտուհի, որոնցից 14-ը հրեուհիներ են, իսկ մնացածները միւս ազգություններից: Դպրոցը բացանելու նախաձեռնությունը պատկանում է մի յատուկ ընկերության, որի նպատակն է տարածել տարրական առևտրական կրթություն:

Ներկայումս գեղեցիկ և պարզ օրերից յետոյ երկի առևտրականից սկսած Քիֆիսում գալիս է ձիւն: Հեռագիրները ծանուցանում են, որ Կովկասեան լեռնաշղթայի վրա մեծ ձիւն է եկել և խանգարել է ճանապարհները:

Ներկայգործության միջնորդությունը վճռեց Սև ծովի արևելեան ափին նորից հողի մեծ տարածություն յատկացնել ձրի բաժանելու այն դահալան անձանց, որոնք ցանկանում են գիւղատնտեսական ծախվածքներ պարտադրել:

Հայրի Մուրադ օպերետոր, որ ներկայացվեց երկուշաբթի, փետրվարի 8-ին, վրաց ազնւականություն լատրոնում, վերցրված է Կովկասի կանանցից: Բովանդակությունը շատ հին է և շատ ծանծան: Վրացի իշխան Մուրադիանի հարսնացու Քիթիկանին փախցնում է լեզվի Հայրի Մուրադը, որին յետոյ բռնում են վրացիները: Նրաժողովությունը պատկանում է Դեկլէր-Շենկին, որ կարողացել է բազմաթիւ եղանակներ յարմարեցնել օպերետին և զոգարել կտորներ ըստեղծել: Լեզգու դերում Սեմիլայի և Քիթիկանի դերում: Բայիսովս գեղեցիկ կատարողներ էին. երկուսի ձայնն էլ այդ երեկոյ հնչում էին իրանց ամբողջ ընդարձակութամբ: Վորոնին՝ դուքանատէր Դավիդկայի դերում կարգաւ մի շարք կուպլետներ, որոնց մէջ միայն մի քանիսը տեղին էին և ծիծաղալար: Կուպլետները վերաբերում էին Քիթիկանի առօրեայ գործերին: Թատրոնը կատարելապէս լի էր: Մենք կարծում ենք, որ Քիթիկանը կուպլետներ կհանքից օպերետներ տարու ժամանակ պետք է լաւ ուսումնասիրել տեղական առանձնայատկությունները և, օրինակ, «Վան-գիւլումը» չը շինել «գոլում գոլում»:

ԲԱՌՈՒՄԻՑ մեղ գրում են. «Ֆելիքս Ֆորի մահվան պատճառով երկու օր է, ինչ այստեղ դռնվող ֆրանսիական և ռուսական շոգենակներ սգի դրօշակ են բարձրացրել: Նոյնպէս սգի դրօշակ բարձրացրին և բոլոր հիւպատոսարանները: Ֆրանսիական հիւպատոս պ. Գելիօրայի մօտ գնացին ցաւակցութիւն յայտնելու շատ բարձրաստիճան պաշտօնեաներ և օտար պետությունների ներկայացուցիչներ»:

ՇՈՒՇՈՒՑ «НОВОЕ ОБОЗРѢНІЕ» լրագրին գրում են. «Անցեալ տարվայ դեկտեմբերի 27-ի գիշերը դաւառում տեղի ունեցաւ մի սարսափելի ոճրադրծություն, որին զոհ գնացին Ննգի գիւղի բնակիչ 70-ամեայ ծերունի Աղաջան Բաղդասարեան և Կաղարծի գիւղի բնակիչ Սարգիս Արաւամբան, 40 տարեկան: Ոճրագործություն տեղի է Շուշու գաւառի Կաղարծի գիւղի ջրադաշնից մէկը: Զարագուշակ գիշերը անյայտ մարդիկ ձեռնեցին դուռը և պահանջեցին, որ իրանց ներս թողնեն. ջրադաշնից ներս հրաժարվեցին բանալ դուռը: Այդ ժամանակ չորս չափազործներ, կոտորատով զոհեցին լծակների ջրաղացի ներսը և սկսեցին անդառաւոր տանջել խեղճերին. երկուսը, վայր գցելով ծերունուն, խորովեցին նրա ձեռքը այդտեղ վառված խարդիկ վրա. միւս երկուսը ծակտուծ էին երկրորդ զոհի կոկորդը ինչ-որ սրածայր գործիքով: Վերջապէս, ենթարկելով դժբաղդներին սարսափելի տանջանքներ, յանդգործները վերջ դրին իրանց զոհերի կեանքին. ծերունուն չորս գնդակ խփեցին, իսկ միւսին—երկու գնդակ: Այս գահազանային ոճիրը բացվեց հետեւալ օրը: Ոճրագործներն էին կարաղաղուհեցի չորս թուրքեր, որոնք սպանությունը գործել են իրանց օւլաբցի ազգականներին խնդրելով. վերջիններս թշնամություն ունեն ննդեցիների հետ: Ոճրագործները կալանաւորված են»:

ԱՍԻԱՎԱՍԿԻՑ մեղ գրում են. «Յունվարի 30-ին կայացաւ Բարեգործական ընկերության Արաւելալի ճիւղի տարեկան երեկոյթը: Պրական-ձայնական մասի ծրագրերը բազմակողմանի էր կազմած. երկու սեւի սիրողների խումբը, պ. Տ. Տոնականի ղեկավարութեամբ, ներդաշնակ երգեց տասից աւելի երգ, որոնցից մի քանիսը կրկնվեցին: Բաւական գեղեցիկ կարգացին Գաւառ-Բաթիկայի, Մատուրեանի և Խաչաւեանի բանաստեղծություններից: Պրական-ձայնական բաժնից յետոյ տեղի ունեցան տեղական պարեր՝ պարերգերով հանդերձ: Նոյն աղուկությունը չունեցաւ երեկոյթի նիւթական մասը. դուռ արդիւնք մնաց մօտ 100 բուրլի: Հարուստները փայլում էին իրանց անպատաւեր բացակայութեամբ: Ծնորակալություն արժանի են խմբի անդամները, ընթերցողները և մանաւանդ պ. Տոնականին, որ ամեն տարի, տոկունութեամբ յաջողելով ամեն մի արգելքի՝ երգեցիկ խումբ է կազմում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐԿԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, փետրվարի 1-ին
Այս տարի համարեա թէ ձմեռ հունեցանք, և այդ մի մեծ բարեբաղդություն էր մասնաւորապէս բազմաթիւ աղբակցի հայ գաղթականների համար, որոնք զուրկ լինելով բոլորովին կենսական միջոցներից, եթէ ձմեռը սատուիկ լինէր: Պրանց օգնելու համար կազմված տեղական յանձնաժողովը միայն 250 թումանի մի գումար ստացաւ: Ատրպատականի թեմակալ առաջնորդից, որից 50 թումանը ուղարկվեց Ուրմիի ճիւղին և մնացածն էլ գործածվեց մօտաւորապէս 1500 հոգուց բաղկացած սալմաստաբնակ գաղթականներին նպատու տալու: Իսկ հայի գիւղը մնալով 8—9 թուման, տակաւին մեծ պէտք կայ նուրբատուութեան, որպէս զի այդ խղճալիներին հարկաւոր եղած գէթ չոր հաջի նպատակ կարելի լինի տալ մինչև ամառ: Այս մասին յանձնաժողովը դեռ պատրաստ է հոգալ և յուսալ է, որ բարերար ազգային կօչնին նրան առատ նուէրներով:

Սալմաստի յաջորդ Խաչիկ վարդապետ Դաւեան դեռ չը վերադարձաւ իր պաշտօնատեղին, որ զբաղվէր ընթացիկ կարեւոր գործերի կարգադրութեամբ, որոնք, ի հարկէ, շարունակ միւսեանց վրա բարդվում են: Նա այցելում է այժմ Ուրմիի նահանգը և, ինչպէս ասում են, հայ ազգաբնակչության մարդահամարն է կազմում, իսկ նրա բացակայութեամբ ժողովուրդը մեծ զրկանքներ է կրում այստեղ, մասնավորապէս Նուրբա և Աշտատ հարստահարութեան: Իսկպէս շատ անմխիթարական է Սալմաստի

ժողովրդի վիճակը ներկայումս. գիւղական ուսումնարանները մնացին փակված ձեռնալ ընթացքում, միայն Փայաջուկի վարժարանը բացվեց, որի ուսուցիչն է պ. Ար. Կարբինեան, ընթացաւարտ Գեղեղեան ձեռնարանի. սակայն 200 աշակերտներից միայն 40 հոգի են յաճախում ուսումնարանը, որովհետեւ մի անձը չէ կարող դրանից աւելին կառավարել և կրթել. իսկ միւսները ինչ պէտք է լինեն—դրանց մասին ոչ ոք չէ մտածում ամբողջ գիւղում: Սահմանաւոր հարկաւոր էր, որ Սալմաստի ազգայինները վերջապէս լուրջ ուշադրություն դարձնէին իրանց երեխաների դաստիարակութեան ամենակարեւոր գործի վրա, քանի որ դեռ այդ մասին անյաղճելի արգելքներ չը կան ասպարէզի վրա, այլ միայն գլխաւոր բանն է, որ միաբանություն և հաստատ կամք ունենան և ամեն դժուարություններ կը հարթվեն:

Պէտք է անյաղաղ կազմել բոլոր գիւղերից ընտրված ներկայացուցիչներից ուսումնարանական հոգաբարձություն, որ որոշէ ամեն մի գիւղի կրթական գործին յատկացնելիք գումարը և ընտրելով մի ընդհանուր տեսող՝ նրա հետ կարգադրէ հարկ եղածը, որպէս զի հենց այս տարի ամեն որոշված հայ գիւղում մի մի նախաքննական ուսումնարան հաստատվի: Աւելորդ է մինչև անգամ ասել, որ տարեկան թիւջի պակասորդը հայթայթել շատ հեշտ է մի հաստատութեան համար, որ այնքան համբաւաւոր վաճառականներ ունի արտասահմանում, որոնք ուրախութեամբ կը մասնակցեն մի այսպիսի գովելի և օգտակար ձեռնարկութեան օգնելու:

Ղալասարի երիտասարդությունը վերջերս համակրելի մի ձեռնարկ արեց գիւղի քաջալոված գրադարանը վերականգնելու և ձօնեց նրան անմահ Գրիգոր Արծրունու յիշատակին. բացման օրը այս առիթով յատուկ պատարագ մատուցվեց և յետոյ գրաւոր ու բերանացի խօսքով հռչակվեց հայոց տաղանդաւոր խմբագրի կեանքը, գործը և նշանակությունը ազգային առաջադիմութեան համար: Յուսալի է, որ «Արծրունու գրադարան» կը շարունակէ մշակել Ղալասարի ժողովրդի միտքը օգտակար ընթերցանութեամբ և ցանկալի էր, որ միւս գիւղական գրադարաններն էլ արժանանային այն տեսակ նախաձեռնի գրութեան, որպիսին այժմ կայ Ղալասարում:

Ուրիշ տարիներ գէթ ձեռնանային ամիսներում ջրղերի վաճառ ու երկիւղը դադարում է հասարակության ակախից, բայց այս տարի շրջապատ արշաւանքի մասին տարածված լուրերը դաժնիկ սուրի պէս մնացել են կախված Սալմաստի հօրիցում: Վերջերս էլ լուր էր պտտում, թէ Շարաֆ բէկը, Շէյխ-Համիդի, Մահմադաղայի և այլ աւազակապետների հետ բանակցություններ է կատարում գարնանը Սալմաստի վրա մի յարձակում գործելու: Այդ բանը անելը շատ դժուար է, կարծում են, սահմանադրի ջրղերի համար, որոնք վստահ են, որ պարսից կառավարություն կողմից լուրջ արածները փառաւորապէս մարտն են, ինչպէս որ մի քանի շաբաթ առաջ էլ օրը ցերեկով, Սոմայի Գասթը աղայի ժաղիկը ձարայի Մէլի-Քուստին սպանեցին, զազանաբար նրա գլուխը երկու մեծ քարի միջև ձգելով: Սակայն հարցը այն է, որ այդպիսի մի հանգամանքում Սալմաստի հայ ժողովուրդը ինչ միջոցի պիտի դիմէ իր գոյութեանը պահպանելու համար: Տարակուս չը կայ, որ նրանք գէթ ի գործութեան դիմել չեն կարող, քանի որ զուրկ են այդպիսի միջոցներից, իսկ ջրղերն ունեն ամենափառաւոր նոր սխտէնի հրացաններ, առատ գնակի պաշարով: Մնում է ժողովրդին միայն մէկ միջոց, այն է աշխուրջ սակի ջրղական որ և է շարժում մի վրա և երբ հաստատ փաստել լինեն, որ դրանք գործադրելու են իրանց միտքն ու նպատակը, այն ժամանակ անյաղաղ հաղորդել սպառնացող վտանգի մասին Ատրպատականի եւրօպական պետությունների ներկայացուցիչներին, որոնք, ի հարկէ, կը կատարեն իրանց պարտականությունները:

Օրերս Մահմադի մօտիկ ինչ անմեղ հայ կուտորիլ տուղ Ջարդամը վերջապէս զրկվեց պաշտօնից և Թաւրիզ ուղարկվեց. դեռ նրա յաջորդը չէ նշանակված, ուստի Սալմաստի վրա պատասխանատու դատաւոր չը լինելով, բնականաբար ամեն ստորին պաշտօնեայ իր ուղած կերպով կեղեքում, հարստահարում, կողոպտում է հայ ժողովուրդը: Ստուգած վերջերսի բարին կատարէ, սովոր էին ասել մեր նախնիքները այդպիսի դժոխական պարագաներում, մեղք էլ նոյնը ցանկանալով այդ անպաշտպան, խեղճ ժողովրդին, սպասենք և յուսանք, որ վերջը բարի կը լինի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Polit. Corresp.» լրագրին Սալոնիկից հաղորդում են, որ սուլթանը չուտով հանդիսաւոր կերպով կը յայտարարէ բէֆօրմների մտցնելու մասին Մակեդոնիայում: Մի և նոյն ժամանակ Մակեդոնիայում արտիլերիան դրեղացրած է չորս բատարէաներով: Ուսկիւր են ուղարկված Կրուպի թնդանօթներ և 20 վազօններ պատերազմական միջոցներով: Բոլարա-թիւրքական սահմանի վրա ուղարկված է մի թիւրք գնեւրալ՝ զօրքերը տեսնելու համար:

«National» լրագրում գերմանական յայտնի գրող Լիպպերտը գնում է չէխների և գերմանացիների յարաբերությունների հարցը Աւստրիայում: Նա ապացուցանում է, որ գերմանացիները անարդար են վերաբերվում չէխներին, որովհետեւ չեն ճանաչում նրանց: Նրանք մինչև այժմ դեռ երևակայում են, որ չէխները մնացել են այն դրոշմեան մէջ, ինչպէս էին Պալապկու ժամանակ: Իսկպէս, նրանք ամենին այն չեն, և չէխները այժմ գերմանացիների նման կուլտուրական ժողովուրդ են: Գերմանացիները մեծ սխալն այն է, երբ նրանք աշխատում են փոքրացնել այդ հակառակորդի նշանակությունը, մի հակառակորդի, որը կարողացաւ փրկել և վերածություն հասցնել իր ժողովուրդը և կատարելապէս կուլտուրական ժամանակակից կենսը ստեղծել: Գերմանացիները մի անգամ ընդ միշտ պէտք է հաւանան, որ չէխ ժողովուրդը չէ կալիքի գերմանացիներ:

«Daily Mail» լրագրի Բելինի թղթակիցը հաղորդում է, որ սրանից յետոյ գերմանական հիւպատոսներ Պարսկաստանում կը նշանակվեն այնպիսի օֆիցերներ, որոնք մի առժամանակ ծառայել են արտաքին գործերի մինիստրությունում: Ասում են, որ այդ նորմուդները Վիլհելմի նախաձեռնութեամբ է տեղի ունենում:

Կրեմլի օրդանական կանոնադրությունը մըշակող յանձնաժողովը, «Հաւաստ» գործակալութեան խօսքով, կանգ առաւ հետեւեալի վրա: «Չորս խնամակալ-պետութիւնների որոշումների համաձայն, Կրեմլն ստանում է ինքնավարութիւն: Երկրի պաշտպանութիւնը և ներքուստ կարգ պահպանելը յանձնվում է ժանդարմերային և քաղաքային զվարդային, որի ծառայությունը պարտաւորական է: Բոլոր գաւառականները հաւասար են և օրէնքի պաշտպանութիւն են վայելում: Պաշտօնական լեզուն յունարէնն է: Հասարակական պաշտօնները մատչելի են բոլոր կրեմացիների համար: Գործադիր իշխանութիւնը պատկանում է արքայիցի Գեօրգիին, որին աշխատակցում են պատասխանատու խորհրդականները: Պատգամաւորները, որոնց ընտրում է ազգաբնակչութիւնը, իսկ ինչ նոյն նշանակում է արքայադիւր, կարծում են ազգային ժողով, որը գումարվում է երկու տարին մի անգամ: Առաջին երկու տարին արքայադիւրն իրաւունք է տրվում մտցնել անհրաժեշտ օրէնքներ՝ դատաստանական, վարչական, ֆինանսական և զինուորական վարչությունների մէջ:

Նմանի պատգամութիւնը, որ մեծ անհանդստութիւն էր պատճառում Կ. Պոլսում, որովհետեւ նա սպասում էր սուլթանի իշխանութեանը Արաբիայի մի մեծ մասի վրա, և որը անադին ծախսեր էր նստում Բ. Դրանը, վերջապէս: Նրանում է, որ թիւրք գործի հրամանատար Արդուլ-ֆաշայի տարած յաղթութիւնը կտրական նշանակություն ունի: Այդ լուրը անչափ ուրախութիւն պատճառեց պալատում և սուլթանին, որը թմթիւնի աղամանազարդ շքանշանով վարձատրեց Արդուլ-ֆաշային: Սակայն սուլթանի դրօշը այդ յաղթութիւնը չէ կարող վերացնել այն հիմնական պատճառները, որոնք ստիպում են արաբ չէխներին ապստամբվել թիւրքացի կառավարութեան դէմ: Նմանի նուաճումից սկսած սուլթան Սելիմ ժամանակ, երեսուն և հինգ տարի շարունակ արաբների ապստամբությունը համարեա երբեք չէ դադարել:

ԻՍԼԱՄ ԼՈՒՐԵՐ

Պետերբուրգում այժմ կազմված է մի յանձնաժողով, որն ուսումնասիրում է արքեպիսկոպութեան հարցը: Այդ յանձնաժողովը ստանում է բազմաթիւ գեղեցիկներ, որոնք գնում են արքեպիսկոպութեան պատճառները և նրա առաջին առնելու միջոցները: Այդ գեղեցիկներից մեկը, ի միջի այլոց, մայրաքաղաքի լրագրողների խօսքով, իր վրա է դարձնում ընթերցողներին ուղարկությունը պ. Կրիկի գեղեցիկները: Հեղինակը գլխաւորապէս կանոն է առնում մանրարհեստաւորների կեանքի ժամանակակից պայմանների վրա, և այն համոզման է գալիս, որ վատ սնունդից և վաղվաճ օրվայ վրա վստահ չը լինելուց և կախված արքեպիսկոպութեան զարգացումը: Նա բերում է, ի միջի այլոց, բոչկապետ Բէօթքիի հաշիւը, որ հիմնված է Կերմանայի 106 խոշոր գործարանների պատասխանների վրա: Այդ գործարաններում բանում էին 103,557 բանուորներ: Հայից երեսուն էր արքեպիսկոպութեան հակումը մեծ կապ ունի սնունդի յատկութեան հետ: Այն գործարաններում, ուր բանուորներին սկսեցին լաւ կերակրել և զովացուցիչ խմիչքներ տալ, բանուորները առողջ էին, լաւ էին աշխատում և արքեպիսկոպութեան հակումը 20%օ-ով պակասում էր: Արքեպիսկոպութեան մասնաւոր շատ է տարածված արհեստաւորների մէջ: Պետերբուրգի բժիշկներից մէկն ասում է,

որ 12 տարվայ ընթացքում արեւելահայկա-
թիւնի համար հիւանդանոց մտնող 15,043
հիւանդանոցի 574 հոգեկաններ էին, առաջ-
նորոգմանը 554, դերձակներ 524, փակա-
նորոգմանը 372 և այլն:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԴՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԵՐ

ԱԼԷԿՍԱՆԴՐՈՍ, 8 փետրվարի: Խէղիվի կինը
արու զաւակ ծնեց:

ՊԱՐԻՉ, 8 փետրվարի: Վատարեալ հանգստու-
թիւն է տրուում: Կարգը պահպանելու համար
միջոցները շարունակվում են: Երէկվայ 150 ձեր-
բակավաճանքից, 60 հոգի բանտարկվեցին:

Երդուեալների դատարանը Գրէնօբլում երեք
տարվայ բանտարկութեան դատապարտեց Մաքս
Բէթին: Պարիզի և Ալժիրի ժողովներում դէպի
սպանութիւնները և կողոպուտները զրդելու
համար:

ՆՈՎՈՐՈՍԻՒՍԿ, 8 փետրվարի: Երկրորդ օրն
է, որ կատաղի ձիւնախառն փոթորիկ է: Հեռա-
գրական հաղորդակցութիւնը տեղ տեղ ընդհա-
տած է: Ռուսաց ընկերութեան շտաբանը Օդէ-
սայում մնաց:

ՄՈՍԿՎԱ, 3 փետրվարի: Փրանսիական կոլ-
նիան հեռագրիցներ ուղարկեց Փորի ալիքին՝
ցաւակցական և նախագահ Լուբէին՝ շնորհաւո-
րական: Կոլոնիան վճռեց պատգամաւորութիւն
ուղարկել Պարիզ արծաթէ պսակով Փորի դա-
գալի վրա դնելու համար: Ստորագրութիւն է
բացված այստեղ ապրող ֆրանսիացիների մէջ
Փորի անուշով հիւանդանոց հիմնելու համար
Մօսկվայում:

ՊԱՐԻՉ, 8 փետրվարի: Պատգամաւորների
ժողովը Դիւպլի 160,000 ֆրանկ կրէդիտ է
պահանջում Փորի ազգային թաղման համար,
այդ դուրսերից 80,000 ֆրանկ կը ծախսվի ար-
տասանմանում հոգեհանգիստներ կատարելու հա-
մար: Պատգամաւորների ժողովը ընդունում է
քննութեան անյետնաձգելութիւնը: Սոցիալիստ
Դէմաւտ պահանջում է, որ թաղումը բուն քա-
ղաքացիական լինի, և պաշտպանում է իր ա-
ռաջարկութիւնը այն ժամանակ, երբ աջակողմը
և կինտօնը չեն կերպով բողոքում են, սպառ-
նալով դուրս գնալ դաշինքից: Դէմաւտը կանգ-
նեցնում է հետօրին, ինչպէս յարգել սգա-
ւոր ընտանիքը: Նրա առաջարկութիւնը մերժ-
վեց 444 ձայնով 68-ի դէմ: Կրէդիտը ընդունվեց
463 ձայնով 42-ի դէմ:

ՊԱՐԻՉ, 9 փետրվարի: Պատգամաւորների ժո-
ղովը Պէյրաք առաջարկութիւն է անում թոյլ
տալ ժամանակաւոր կրեդիտ մարտ ամսվայ հա-
մար: Նախագիծն ընդունված է: Պատգամաւոր-
ների ժողովը միաձայն որոշում է՝ գնալ հինգ-
շաբթի Նիսեան պալատը՝ ներկայ լինելու Փորի
մարմինը տնից դուրս բերելու ժամանակ, թէ-
պէտ պաշտօնական կորստից պէտք է կազմա-
կերպվի «Notre-dame» եկեղեցում: Նիստը փակվեց:
ՊԱՐԻՉ, 9 փետրվարի: Հանքափորների մէջ
գործադուլ սկսվեց:

Սենտաի հանրապետական խմբերի բերօն
վճռեց վաղը հարցադնելու անել չաքաթ և կի-
րակի օրերը տեղի ունեցած ցոյցերի առիթով:

ՄԱՐԻԻԻ, 9 փետրվարի: Պատգամաւորների
ժողովը Ալիկ հաստատում է, որ կառավարու-
թիւնը հրամանագրեց Սանտ-Նագոն յանձնել
թշնամիներին՝ միապետութիւնը փրկելու համար:
Միմիստը կը պատասխանի վաղը: Նիստը ընդ-
հատվեց:

Սենտա: Արմէնաս, աղմուկի մէջ, յարձակվում
է մի քանի գեներալների վրա և ապադուցանում
է, որ պատերազմ շարունակելուն խանդարեց
կառավարութիւնը: Զինուորական միմիստը բո-
ղոքում է, ասելով, որ Կուբայում մնալ այլ ևս
անհնարին է: Մարշալ Բլանկօ հերքում է Ար-
մէնասի յարձակումները:

ՄԱՐԻԻԻ, 9 փետրվարի: Սենտաը վճռում է
ցաւակցութիւն յայտնել Փրանսիային Փորի մահ-
վան պատճառով: Սազատաւ մտցնում է Թի-
լիպեան կղզիները զիջելու նախագիծը: Արմէնաս
վերանորոգում է իր յարձակումները գեներալ-
ների վրա, որոնց մեղադրում է Սանտ-Նագոն
թշնամիներին յանձնելու համար, և զարմանք է
յայտնում, որ նրանցից մի քանիսը հրացանի չը
բռնվեցին: (Աղմուկ):

ՊԱՐԻՉ, 9 փետրվարի: Երեկոյան բուլվարնե-
րի վրա շատ զբոսողներ կային, որոնք շատ հա-
զրիստ էին պահում իրանց: Ոչինչ զէպքեր տեղի
չունեցան: Զեռը առած միջոցները ապահովում
են կարգը:

ՊԱՐԻՉ, 9 փետրվարի: Պատգամաւորների
ժողովը նախասնեակներում տարածված լուրե-

րին նայելով, որոնք, սակայն, բաւական ան-
որոշ են, նախագահի հրովարտակը շատ էլ ըն-
դարձակ չէ և, ընդհանուր կերպով, ասվում է
հետեւեալը: Շնորհակալութիւն յայտնելով սեն-
տօններին և պատգամաւորներին իրան մատու-
ցած մեծ պատուի համար, նախագահը կասի, թէ
ամեն ջանք կը գործադրէ նոր պաշտօնով իր
վրա դրած պարտաւորութիւնների բարձրու-
թեան վրա կանգնելու համար: Նա կը ստիպէ
յարգել սահմանադրութիւնը և յանձն կառնի
նրա ոգին բարեխղճօրէն տարածելու պարտաւո-
րութիւնը: Զերմ հրաւէր կարգավոր խաղաղա-
ման և համաձայնութեան գաղափարներին, հրո-
վարտակը կը խօսի ֆրանսիական հայրենիքի մա-
սին, գովասանական խօսքեր կուղղէ զօրքին և
յոյս կը յայտնէ, որ երկիրը իր ունեցած սիրով
դէպի զօրքը և յարգանքով դէպի արդարադա-
տութիւնը կը կարողանայ վերականգնել ներ-
դաշնակութիւն, համաձայնութիւն, նոյնպէս և
ժողովուրդը յուզող հարցի լուծումն ստանալ:
Նախագահը կը յիշեցնէ, որ ինքն միշտ նուի-
րում էր իրան զլիսաւորապէս բանաւորների, սօ-
ցիալական, տնտեսական, արդիւնագործական,
ֆինանսական և աշխատանքը կազմակերպելու
հարցերի ուսումնասիրութեանը: Նա կառաջար-
կի պարլամենտին նուիրել իրան գաղափարնե-
րի այդ տարբեր կարգին, որոնք պէտք է գործնա-
կան և պողպատեղ հետեւադրեցին հասցնեն: Իր
արտաքին յարաբերութիւնների մէջ Փրանսիան
կը հետևի բարեկամութեան հաւատարմ մնա-
լու քաղաքականութեանը, որ նա կարողացաւ
ստեղծել: Այդ քաղաքականութիւնը իր բարե-
խղճութեամբ, իր անշահօրութեամբ, իր հա-
ւատարմութեամբ պատմական արանդութիւննե-
րին՝ խաղաղութեան ամենահաստատ երաշխաւո-
րութիւնը կը լինի և ամեն ուրիշ բանից աւելի
կը կարողանայ Փրանսիայի համար պահպանել
այն տեղը, որ նա ունի աշխարհում:

Պատգամաւորների ժողովի նիստի ժամանակ
Դէմաւտը պահանջեց յայտնեց, որ թէպէտ Փոր
ֆրանկմասուն էր, բայց առանց հարցնելու նրանից,
քանանայ կանխելու մօտը: Փորի կարմնէտի
զլիսաւորը, Լէգալ երկրում է ագիտ. խօսքով
որ Փոր, կատարելապէս ուղքը գլխին, երկու
անգամ խնդրեց քանանայ կանխել իր մօտ:

ՊԱՐԻՉ, 9 փետրվարի: Փորի մահվան մասին
արձանագրութիւնը, որ ստորագրել են չորս բը-
ժիշկներ և որին ստորագրել է գեներալ Բայլի,
վկայում է, որ բոլորը միաձայն այն համոզման
եկան, որ արիւնը գլխին է խիլել, և կաթնա-
ծախար է եղել գէմը, և մարմին ձախ կողմը:
Պատգամաւորների ժողովի նիստից յետոյ,
Դիւպլի տեղեկացրեց տիկին Փորին պատգամա-
ւորների ժողովը վճռի մասին՝ ուղեկցել հանգու-
ցեալ նախագահի մարմինը Նիսեան պալատից:
Տիկին Փոր խորին կերպով զգացված էր արտա-
յայտված այդ համակրութիւնից:

Դիւպլի վերանորոգեց հրահանգներ՝ աղմկալի
ցոյցերին վերջ տալու նպատակով:
ՆԻԻ-ՆՈՐԻ, 9 փետրվարի: «Շերիլան» փոխա-
դրող նաւը երէկ Սուէցի վրայով ճանապարհ ըն-
կաւ Մանիլա 1385 մարդուց բաղկացած զօրա-
բաժնով:

ՄԱՐԻԻԻ, 9 փետրվարի: Սենտա: Կոլոնիանե-
րի միմիստը պաշտպանում է կառավարութեան
և գեներալների գործողութիւնները և յայտնում
է, որ կառավարութիւնը պատասխանատու է
վերջինների գործողութիւնների համար: Նիստը
վերջացաւ:

ԲՈՒԿԱՊԵՏ, 9 փետրվարի: Վիէնայից հա-
ղորդում են, որ կայսրը միմիստը-նախագահ՝ Նը-
շանակեց Ալիք և յանձնարարեց նրան միմիստ-
րութիւն կազմել: Սէլ ընդունեց յանձնարարու-
թիւնը և վաղը, առաւօտեան, կերթայ Բուդա-
պէշտ համաձայնութեան մասին դիմադիր կու-
սակցութեան ընդհատած բանակցութիւնները
վերականգնելու համար:

ՄԱՐԻԻԻ, 9 փետրվարի: Պատգամաւորների
ժողովը Սիլվէա առաջարկութիւն է մտցնում,
որով դատապարտում է կառավարութիւնը նրա
անտարբերութեան համար դէպի երկրի թշուա-
ռութիւնները:

Պատգամաւորների ժողովը միաձայն որոշում
է խորհրդ կառավարութիւնից, որ նա ցաւակ-
ցութիւն յայտնէ Փրանսիային Փորի մահվան
պատճառով:

ՊԱՐԻՉ, 9 փետրվարի: Ձախակողմի մի քանի
խմբերի բերօն վճռում է գնալ առանձին առան-
ձին Դիւպլի մօտ և նրա ուղարկութիւնը դարձ-
նել, թէ անհրաժեշտ է արգելել երէկ և անցեալ
օրը տեղի ունեցած ցոյցերի կրկնութիւնը:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐՈՍ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատար.՝ ԱՐԹՐՈՒՆՈՒ ԺԱՄԱՆԳՆԵՐ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ

Ճանուցանում է ընդհանուր դիտութեան, որ դուրսի 1898 թիւի ղեկեղծների 14-ի նիստում կա-
յացած որոշման հիման վրա ներկայ տարվայ յունվարի 1-ից մտցնվում է անշարժ կալուածը
նեքի նոր գնահատութիւն: Անշարժ կալուածը ունեցողներին առանձին ճանուցարանով կը
յայտնվի այն հարկը, որ պէտք է նրանք տան քաղաքի օգտին նոր գնահատութեամբ: Իսկ մինչև
այդ ճանուցարանը ստանալը կալուածատէրերը պէտք է վճարեն հարկը հին գնահատութեամբ: Եթէ
նոր հարկը աւելի մեծ կը լինի, քան հինը, այն ժամանակ կալուածատէրերը պարտաւոր են
լրացնել պակասորդը և արտօնութիւն ունեն մինչև ապրիլի 30-ը չը վճարել տուգանք այդ հարկը
ուշացնելու համար: Իսկ եթէ նոր հարկը դուրս գալ հինից պակաս, այն ժամանակ այդ աւելորդ
տրված գումարը կը հաշվի տարվայ երկրորդ կիսամեակի հարկի մէջ, և կը վերադարձվի, եթէ
պակասը այդ հարկի գումարից աւելի է: (Հ. Տ. Ո.)

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Թիֆլիսում, վաճառվում են հետեւեալ հայերէն նոր գրքերը.

Գ. Կ.	Գ. Կ.
Աղանեան Հ. Գ. Ե., «Լուծայ», գրական հանդէս, 1899 թ. ա. գիրք (IV տարի) Թիֆլ.	2 —
Առաջին հայերէն պատմ. օրացոյց, 1899 թ. Թիֆլ.	50 —
Խոհարարութիւն, Թիֆլ. 1898 թ.	40 —
Առեւտր. Նիւնոյ, Նոր-Նախ, 1898 թ.	30 —
Քրոն-Նիւնոյ, վէպ, Թիֆլ. 1898 թ.	30 —
Աւետիքեան Ստ., Իրանիայի դատը, Բագու, 1898 թ.	80 —
Նահապետ, Թիֆլ. 1898 թ.	20 —
Բարեւոյդ արեան, Բարեւոյդի առանձին, Թիֆլ. 1898 թ.	20 —
Բերբերեան Ռ., Հայոց նորագոյն բանաստեղծները, մասն ա. Ռոստոմ Դօնի վրա, 1898 թ.	20 —
Բէրէտ, Փորիկ լորիկ պատմութիւնը, Բագու, 1898 թ.	1 25 —
Բարեւոյդ Ե. Ս., Բանաստեղծը և հերոսը, Թիֆլ. 1898 թ.	25 —
Բրուտեան, Ռամկական միմիստից, երկրորդ տպագր. Աղէքս. 1898 թ.	60 —
Դ. Վ. Երկրի, Օղը և կեանքը, Թիֆլ. 1898 թ.	10 —
Զեւրիս սկի, Հաւ, տառնեղեք նկարով, Թիֆլ. 1898 թ.	5 —
Թաւադեան, Հայ ժողովրդի արհեստագործութիւնը, Թիֆլ. 1898 թ.	40 —
Լաւայեան Եր., «Աղագրական հանդէս», 1899 թ. գ. գիրք, Թիֆլ.	2 —
Ձաւար, Թիֆլ. 1897 թ.	1 —
Ձանգեղուրի գաւառ, Թիֆլ. 1898 թ.	80 —
Վարանդա, Թիֆլ. 1898 թ.	1 20 —
Լանգստօտ, Մեղունք, Թիֆլ. 1898 թ.	15 —
Լեւոնուհի, Ամուսնութեան դարգացում, Թիֆլ. 1897 թ.	20 —
Լեւոնուհի, Դե, Թիֆլ. 1898 թ.	15 —
Լ. Ա., Սաֆօ, պօէմա, Շուշի, 1897 թ.	50 —
Կօպպէ, Հանրիէտ, Թիֆլ. 1899 թ.	30 —
Մալխասեան Երվանդ, Զօրութ-Սորոտ, ա. գիրք, Թիֆլ. 1898 թ.	30 —
Յարութիւնեան Եր., Սանահին, Թիֆլիս, 1898 թ.	30 —
Յուդայի վերջին գիշերը, Թիֆլ. 1898 թ.	7 —
Պասկալ-Նիւրա կեանքը և գիտական գործունէութիւնը, Թիֆլ. 1899 թ.	20 —
Սկոտտ Վալտ., Կղզիների լորիկ, Թիֆլ. 1898 թ.	1 —
Սիլվիցկի, Խորամանկ աղուէք, Թիֆլ. 1898 թ.	10 —
Սոլովեան, Կտրված սիրտ, վէպ, Մոսկ. 1898 թ.	40 —
Տէր-Վ. Երանցեան, Մայրենի լեզու, ա. տ. Թիֆլ. 1899 թ.	35 —
Տարբեր, մայրենի լեզուի բերականութեան, ա. և բ. մասերը, Թիֆլ. 1899 թ.	50 —
Տաղաւարեան, Առողջապահութիւն առտնին, Կ. Պոլիս, 1898 թ.	2 —
Փօն-Վ. Իլդէբերուխ, Կալուրայի այգու, Թիֆլ. 1898 թ.	20 —

Հասցէն՝ ТИФЛИСЬ, Центральная Книжная Торговля. (Հ.) 2—3

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

ԼԵՈ

Մ Է Լ Ի Ք Ի Ա Ղ Զ Ի Կ Ը

(Պատմական վէպ, 755 էրես)


Գիրք 1 ԲՈՒՐ. 30 ԿՕՂԵԿ (սովեկաթ 2 րուբլի)

Ծախվում է Թիֆլիսում՝ հեղինակի մօտ («Մշակի» խմբագրատանը) և Կենտրոնական գրա-
վաճառանոցում ՇՈՒՇԻՄ՝ Բագրատ Տէր-Սահակեանցի գրավաճառանոցում:

Հեղինակի հասցէն՝ ТИФЛИСЬ, редакция „Мшакъ“.

2—10

ՈՒՐԲԵՆ



L'URBAIN

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ՝ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ, ՕԺԵՏԻ, ՀԱՍՈՑԵՆԵՐԻ և այլն ԱՊԱՀՈ-
ՎԱԳՐՈՒԹԵԱՆ, առանձին ճանուցարանով՝ հիւանդութեան և աշխատելու անընդհատելու
թեան զէպքերում, և մասնակցութիւն ունենալով դուրս արգիւնքի մէջ հէնց ապահովա-
կութեան առաջին տարուց սկսած: Գրասենեակը՝ Անդրկովկասի, Անդրկասպեան
երկրի, Թիւրքեստանի և Բուխարայի համար՝ գտնվում է Թիֆլիսում, Միքայէլեան փո-
ղոց, տուն Ամիրազովի № 103:

Գլխաւոր լիազոր. ԲԱՐԱՏ ԳԵՐԱՍԻՄՈՎԻՉ ՏԵՐ-ՄԱՔԷՆՍԵԱՆ
Տեղաւոր. ՆԻԿՈԼԱՅԻ ԳԵՐԱՍԻՄՈՎԻՉ ՏԵՐ-ՄԱՔԷՆՍԵԱՆ

Տեղեկութիւններ և բերանները տալիս են ընկերութեան գործակալները կայսրութեան բոլոր
քաղաքներում: (ամս. 10, 25) 15—20

Կենտրոնական գրավաճառանոցը

բաց է անում բաժանորդագրութիւն

Վ. Փ Ա Փ Ա Ձ Ե Ա Ն Ի

ՆԵՍՍԱ

Ընդարձակ վէպի համար, որ կը բաղկանայ 350—400 խորք երեսներից: Վէպի նիւթը եւրօպա-
կան այդ ուսանողների, այլ և մեր ներկայ հասարակութեան կեանքից է: Բաժանորդագրութիւնը
արժէ 1 րուբլի, իսկ գիրքը լոյս տեսնելուց յետոյ կարծես 1 ր. 50 կ.: Բաժանորդագրութիւնը
ընդունվում է մինչև մայիսի 1-ը: Բաժանորդագրութեան համար դիմել Կենտրոնական գրավաճա-
ռանոց: Тифлис, Центр. книжн. торг. Употребительской Librerie Centrale. Tiflis.

(Հ.) 2—10